# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան 03.07.2017թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հարություն Գևորգյան - Մատակարարման բաժնի պետ

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ- բացող անձնակազմ

Դավիթ Գասպարյան - Մատակարարման բաժնի մասնագետ

Հայկ Հակոբյան - Մատակարարման բաժնի մասնագետ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ

Վահե Յուզբաշյան «Նախագիծ» մասնաճյուղի տնօրեն

Սամվել Հովսեփյան - «Նախագիծ» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան - Մատակարարման բաժնի պետի տեղակալ

### Հայտերի բացման մասին

---

(Հ. Գևորգյան)

1. **Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

1.1 «Գեո-Նալ» ՍՊԸ՝ իրավաբանական հասցե՝ ք. Երևան , Խանջյան 13

1.2 «Սեգ» ՍՊԸ՝ իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Սարկավագի 72/2, բն.18

2. **Տվյալներ՝ ծրարը կազմելու և ներկայացնելու հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. **Տվյալներ՝ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 Մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

4. **Տվյալներ՝ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին.**

4.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատել բավարար:

5. **Մասնակիցների առաջարկած գները.**

5.1«Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկներ են ներկայացրել 2 մասնակից.

*ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/*

| Հ/Բ | Գնման առարկայի անվանումը | Քանակ | «Գեո-Նալ» ՍՊԸ | «Սեգ» ՍՊԸ |
|---|---|---|---|---|
| 1 | GNSS համակարգ Leica Zeno20 արտաքին անտենայով | 1 | 5 390 000 | 6 650 000 |
| 2 | Էլեկտրոնային տախիոմետր leica ts 06 plus 5" R1000 | 1 | 4 980 000 | ------------ |

5.2 Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:

**6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին.**

6.1 Գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Գեո-Նալ» ՍՊԸ:

6.2 էլեկտրոնային փոստի միջոցով հարցում ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

6.3 Համակարգի միջոցով ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

**7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման օրվանից հաշված հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հարություն Գևորգյան

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ- բացող անձնակազմ

Դավիթ Գասպարյան

Հայկ Հակոբյան

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ

Վահե Յուզբաշյան

Սամվել Հովսեփյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ռուբեն Ալբերտյան